

Շուշանիկ ՏԵՐ-ԱՂԱՄՅԱՆ
Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

**ՆԵՐԿԱՅԻ ՁԵՎԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԵՐՊԱՅԻՆ
ԻՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ուսումնասիրելով ներկայի ձևերի նշանակությունները և կիրառության հնարավորությունները գերմաներենում և հայերենում՝ պարզ է դառնում, որ այդ ձևերը դրսևորում են մի շարք ընդհանրություններ բովանդակության պլանում: Այս հիմքի վրա էլ հնարավոր է դառնում տվյալ ձևերի զուգադրումը: Նախ և առաջ պետք է նշել, որ երկու դեպքում էլ այս ժամանակային ձևերը բացառապես ներկայի իմաստով հանդես չեն գալիս, այլ՝ դրանք կարող են արտահայտել այնպիսի գործողություն, եղելություն, որոնք վերաբերում են ապառնի ոլորտին կամ ներկայացնել անցյալի գործողություն, նույնիսկ այնպիսի արտահայտություններ, որոնք ընդհանրապես որևէ ժամանակային պահի չեն վերաբերում, քանի որ նշում են պարբերաբար կրկնվող գործողություն կամ ընդհանրապես ժամանակի իմաստ չեն պարունակում /Գարբիելյան, 2000: 57-58/: Ներկայի այս տարբեր գործառնությունների հիմքում ընկած է ներկայի ձևերի բազմիմաստությունը: Այս բազմիմաստությունն էլ հենց պատճառ է հանդիսանում (մասնավորապես գերմանագիտական քերականության մեջ) ներկայի՝ որպես ժամանակային ձևի, ոչ միասնական բնորոշման համար: Այսպիսով, ներկայի այսպիսի բազմազան կիրառությունների համար որպես ընդհանուր հայտարար չի կարող հանդիսանալ միայն «համընկնում խոսքի պահի հետ» իմակը: Այսինքն, ներկայի ձևերի բնորոշման համար ելակետ չի կարելի համարել բացառապես խոսքի պահը, քանի որ սույն ժամանակային ձևերը կարող են գործադրվել արտահայտելու համար այնպիսի գործողություն, որը համընկնում է խոսքի պահի հետ, ինչպես նաև՝ այնպիսի գործընթացներ, որոնք հարաժամանակային բնույթ ունեն և խոսելու պահի հետ չեն համընկնում: Ժամանակային անսահմանափակության պատճառով գործողությունը և եղելությունը, որոնց մասին հաղորդում են ներկայի ձևերը, կարող են ցույց տալ կետայինից (Es regnet. Անձրևում է:) միչև հարաժամանակային գործողություն (Die Erde dreht sich um die Sonne. Երկիրը պտտվում է արեգակի շուրջը:) Ուստի, սույն երևույթը

թույլ է տալիս որոշակի վերապահումներով մոտենալ ավանդական քերականության մեջ ընդունված ներկայի ժամանակային ձևերի համար «ներկայի արտահայտման ժամանակային ձև», «գործողության և խոսքի պահի համընկնում» բնորոշումներին: Ներկայի ձևերի բնորոշման համար անհրաժեշտ է նշել նախ և առաջ երկու կարևոր դրույթ.

1. Ներկայի ձևերը կարող են արտահայտել անցյալի և ապառնի իմաստներ, սակայն, ի տարբերություն այլ ժամանակային ձևերի, չեն մատնանշում գործողության սահմանափակում խոսքի պահի միջոցով (գործողության կատարվելը խոսքի պահից առաջ՝ անցյալ ժամանակ, խոսքի պահից հետո՝ ապառնի):

2. Ներկան (Präsens) ներառում է խոսքի պահը՝ գործողությունը ներկայացնելով որպես մի շարունակականություն: Այսպիսով, ներկայի ժամանակային ձևերի տարբեր գործառնությունների պատճառը պետք է փնտրել նրա արտահայտած «ներկայի» ընդգրկում, համընդհանուր բնույթի մեջ: Ինչպես օրինակ՝ Worauf wartest du? Ինչի՞ ես դու սպասում: Խոսողի կողմից առաջարկվող հարցը ենթադրում է անորոշ ժամանակից սկսված գործողություն: Այս հարցը, սակայն, կարող է արտահայտել որոշակի եղանակավորում կամ տևականություն, գործողության սկիզբ կամ նպատակ՝ հավելյալ խոսքային միջոցների ներմուծմամբ.

Seit wann wartest du?

Երբվանի՞ց ես սպասում:

Wie lange wartest du?

Որքա՞ն ժամանակ ես սպասում:

Worauf wartest du noch?

Ինչի՞ ես դեռ սպասում:

Ինչպես տեսնում ենք, սույն օրինակներում *seit wann/երբվանից, wie lange/ որքան ժամանակ, noch/դեռ* բառային առկայացուցիչների հավելումով հնարավոր է որոշակի իմաստի դրսևորում, որն ավելի հստակեցնում է հարցի նպատակը:

Ուստի, ներկայի բազմազան կիրառության հնարավորություններն առավել պարզ դրսևորվում են խոսքային իրավիճակներում: Ներկան չունի հարացուցային հոմանիշներ: Ներկայի ժամանակային ձևերի հոմանիշային հարաբերությունների հիմքում ընկած է փոխանցման երևույթը, որի շնորհիվ սույն ժամանակային ձևերը, փո-

խաղրվելով կիրառության այլ ոլորտ, հանդես են գալիս իրենց համար ոչ հատկանշական նշանակությամբ: Այդ նշանակությունները, սակայն, դիտվում են որպես ներկայի ձևերի կիրառության ոճական հնարավորություններ: Ոճական տեսակետից առավել արտահայտիչ է ներկայի՝ անցյալի իմաստով կիրառությունը, որտեղ ներկան, փոխաղրվելով անցյալ կատարյալի ոլորտ, ձեռք է բերում անցյալի իմաստ (պատմական ներկա): Անցյալ կատարյալի փոխարեն ներկայի ձևերի կիրառությունը թույլ է տալիս ավելի կենդանի բնույթ հաղորդել պատմվածքին. «Da liege ich doch gestern auf der Couch und lese, kommt Ingeborg ins Zimmer und gibt mir einen Kuss» /Duden, 148/.

«Ահա պառկած եմ երեկ բազմոցին և կարդում եմ, կամաց սենյակ է մտնում Ինգեբորգը և ինձ մի համբույր տալիս»:

Մինչդեռ ներկայի՝ ապառնի ոլորտ փոխանցման դեպքում ոճական ազդեցությունն այնքան էլ մեծ չէ: Er kommt. (Նա գալիս է:) նախադասությունն առանց որևէ համատեքստի և բառային առկայացուցչի կարող է երկիմաստ լինել: Այս դեպքում խոսողը լոկ իրագել է դարձնում գործողության մասին, մինչդեռ Er kommt morgen. (Նա վաղը գալիս է:) նախադասության մեջ *morgen/ վաղը* ժամանակի մակբայի հավելումով սույն արտահայտությունը ձեռք է բերում ապառնի իմաստ (մեկ այլ ժամանակակետում կատարվելիք գործողության իմաստ): Er kommt gerade. (Նա գալիս է հենց հիմա:) նախադասության պարագայում, սակայն, առկա է խոսքի պահի համընթացություն գործողության պահի նկատմամբ, որտեղ, փաստորեն, գոյանում է գործողության (E) և խոսքի պահի (S) համընկնող դրվածք: Խոսքի պահի և գործողության ժամանակի տարածման մասին (երկու ուղղություններով) ներկայի ձևերը հստակ պատկերացում չեն տալիս: Գերմաներենում ներկայի՝ որպես ժամանակակերպային ձևի, բնորոշման համար կարևորվում է գործողության և խոսքի պահի միջև զոյություն ունեցող հարաբերությունը: Այսպես օրինակ՝ գործողության և խոսքի պահը նշում են համընկնող դրվածք հետևյալ նախադասություններում. “Ich lese das Buch”. (Ես կարդում եմ գիրքը:) “Die Erde dreht sich um die Sonne”. (Երկիրը պտտվում է արեգակի շուրջը:) և “Seit 10 Jahren wohne ich in Köln”. (10 տարուց ի վեր ես ապրում եմ Բոլոնում:): Ուստի, այստեղից հետևում է, որ խոսքի պահի տեղակայումը գործողության ժամանակի նկատմամբ

որոշակի ժամանակահատվածի ընթացքում որոշում է միայն համատեքստը: Ստորև բերված օրինակներից առաջինի դեպքում առկա է գործողության և խոսքի պահի համընկնող դրվածք, վերջին 2 օրինակների դեպքում, սակայն, գործողության պահը տեղակայված է խոսքի պահից հետո, քանի որ դրանք հանդես են գալիս համապատասխան համատեքստում և պարզ է, թե ներկայի ինչ իմաստային նրբերանգներ են ենթադրում:

ա) Aber ich denke jetzt an dich, mein Freund.

Ես այժմ մտածում եմ քո մասին, ի՛մ ընկեր:

բ) (Ich verspreche) Ich lese das Buch.

(Ես խոստանում եմ) Ես կկարդամ գիրքը:

գ) (Wenn du im nächsten Jahr zurückkommst) Ich wohne in Hamburg.

(Երբ դու հաջորդ տարի վերադառնաս) Ես ապրելիս կլինեմ Համբուրգում:

Վերը բերված բոլոր օրինակներում պարզ երևում է, որ ներկայի ձևերն արտահայտում են առաջին դեպքում բուն ներկայի իմաստ, որն առավել մոտ է տեղակայված ներկայի դաշտի միջուկին, մյուս երկու օրինակներում, սակայն, այն արտահայտում է ներկայի հարացուցային նշանակությանը ոչ բնորոշ իմաստներ՝ իմաստային դաշտում տեղակայվելով ավելի հեռու, դեպի ծայրամասերը: Ուստի, այս փաստերը թույլ են տալիս ներկայի ձևերի համար տարբերակել հիմնական, առաջնային և երկրորդական իմաստների մի փունջ: Ե՛վ գերմաներենում, և՛ հայերենում ներկայի ձևերն իրենց առաջնային իմաստով արտահայտում են ընդհանրական, պարբերական, բնութագրող, կետային իմաստներ՝ իրացվելով որպես անփոփոխակներ: Մինչդեռ, երկրորդական իմաստները հանդես են գալիս որպես փոփոխակներ՝ ածանցվելով ներկայի ձևերի առաջնային իմաստներից: Երկրորդական իմաստներն՝ իրենց տևական, ընդհանրական, պատմողական, նկարագրական արտահայտությամբ, ընդհանրական, պարբերական, բնութագրող իմաստների մասնակի դրսևորումներն են խոսքում: Ներկայի ձևերի այսպիսի, իրենց համար ոչ հատկանշական գործառույթների ուսումնասիրության ժամանակ հնարավոր է բացահայտել ժամանակի և կերպի միջև հարաբերության խնդրի կարևոր դրույթներ: Ներկայի ձևերը, հանդես գալով նկարագրելու, պարբերական և տևական գործառույթներով, հիմնականում

ընկալվում են որպես անկատար կամ տևական և պարբերական կերպային հակադրություններ: Եթե կերպային համակարգը և՛ գերմաներենի և՛ հայերենի համար ներկայացնենք կատարյալ - անկատար կերպային հակադրության տեսքով, ապա ներկայի ձևերի իրացման հնարավոր տարբերակները կարելի է տեղակայել անկատար կերպային հակադրությունն ընդգրկող տևական և պարբերական կերպային հակադրություններում: Ի տարբերություն հայերենի և գերմաներենի, կան լեզուներ (ինչպես օրինակ անգլերենը), որոնք ունեն ներկայի տվյալ իմաստների արտահայտման կոնկրետ ձևեր: Ընդհանուր, կոնկրետ և շարունակական ներկաները տարբերվում են հատուկ քերականական ձևերով՝ *Indefinite* ~ *Continuous* /Hovhannisyan, Harutyunyan, 2009: 160/: Մինչդեռ մեր կողմից գուգադրվող լեզուներում ներկայի այս ձևերը բայական հարացույցում հակադրություն չեն կազմում: Գերմաներենում այս ժամանակային ձևերի տարբերակված գործառնության ամբողջ ծանրությունը կրում են բառային, շարահյուսական միջոցները և համատեքստը, որոնք էլ պայմանավորում են ներկայի ժամանակային ձևերի որոշակի իմաստային նրբերանգի դրսևորումը, ինչը, սակայն, առավել ակնհայտորեն դրսևորվում է ներկայի ձևերի հիմնական և երկրորդական իմաստների քննության ժամանակ: Գերմաներենում կերպը՝ որպես քերականական կարգ չի իրացվում հատուկ քերականական ձևերով: Եվ քանի որ յուրաքանչյուր քերականական կարգի գոյության պայմանը քերականական իմաստի և արտահայտման քերականական ձևի առկայությունն է, ապա գերմաներենում այն չի կարող գոյություն ունենալ որպես բայական քերականական կարգ, արտահայտման քերականական կադապարի բացակայության պատճառով: Ուստի, այս կապակցությամբ նպատակահարմար է ներկայի ձևերի համար սահմանել ժամանակակերպային բնորոշումը, քանի որ այս դեպքում ժամանակը հանդիսանում է գլխավոր քերականական կարգը, որից ածանցվում է նաև կերպիմաստը՝ որպես ոչ քերականական կարգ, այլ՝ որպես բառա-քերականական հատկանիշ, որ դրսևորվում է գերմաներենում բայիմաստի, ժամանակաձևերի արտահայտած կատարյալ - անկատար իմաստների, բայական նախածանցների միջոցով, բառային ու շարահյուսական հավելյալ միջոցների ազդեցությամբ, ինչպես նաև՝ համատեքստով:

Ինչպես արդեն վերը նշվեց, ներկայի ձևերը հանդես են գալիս նախ և առաջ ընդհանրական, պարբերական, բնութագրող և կետային իմաստներով: Խոսելով *ընդհանրական ներկայի* մասին՝ պետք է նշել, որ այս դեպքում խոսքը վերաբերում է ներկայի այնպիսի ձևերի, որոնք ներկայացնում են հարաժամանակային գործողություն, եղելություն, որոնք ենթակա չեն որևէ ժամանակային տրոհման, չեն ներառվում ոչ մի ժամանակային պլանում: Ընդհանրական ներկան իմաստային տեսակետից մոտենում է *պարբերական ներկային*. Երկուսն էլ ներկայացնում են հարաձիգ գործողություն: Մինչդեռ պարբերական ներկան նշում է ժամանակային սահմանափակում. այսինքն այն կրում է պարբերաբար կրկնվող բնույթ, արտահայտում է այնպիսի գործողություն, որն ընդհատվում է ժամանակ առ ժամանակ: Մինչդեռ ընդհանրական ներկայի դեպքում այդ գործողությունն անընդհատ է:

Ներկայի ձևերի արտահայտած պարբերականության առաջնային իմաստի դրսևորումը խոսքում պայմանավորում են որոշակի գործոններ. դրանք են՝ բառային առկայացուցիչները, պարագա կամ պարագայական խմբերը, ինչպես նաև համատեքստը.

Wilhelm, ich weiß oft nicht, ob ich auf der Welt bin (Goethe, 1986: 55).

Հաճախ մոռանում եմ Վիլիելմ, որ այս աշխարհում եմ ապրում (Գյոթե, 1992: 101):

Angewohnheit (Gewohnheit), pflegen + zu Infinitiv կառույցները, որտեղ սովորություն ունենալ + անորոշ դերբայ կառույցն արդեն իսկ ենթադրում է պարբերաբար կրկնվող գործողության իմաստ.

Paul hat Angewohnheit unangemeldet die Tür zu klopfen und bis nach dem Dinner zu bleiben /Krüger, 1973: 56/.

Պաուլն սովորություն ունի առանց գգուշացնելու դուռը թակել և ճաշից հետո էլ դեռ մնալ:

Ներկայի ձևերի համար պարբերականության իրացման կատարյալ միջավայր են հանդիսանում *wenn* ստորադասական շաղկապով կապակցված բարդ ստորադասական նախադասությունները, որտեղ տվյալ շաղկապի գործածությունը ենթադրում է «ամեն անգամ» ժամանակի ցուցիչ՝ իբրև ենթատեքստ, որը մնում է տողամիջում թաքնված.

Ach, wenn ich dann noch halb im Taumel des Schlafes nach ihr

tappe und drüber mich ermuntere - ein Storm von Tränen bricht aus meinem gepressten Herzen, und ich weine trostlos einer finstern Zukunft entgegen (Goethe, 1986: 53).

Ախ, երբ սակայն կիսաքուն խարխափելով ձգվում եմ դեպի նա և այդ պահին արթնանում եմ, արցունքի հեղեղներ են թափվում իմ փշրված սրտից, և ես մռայլ ապագայի կանխագագացումով լալիս եմ անմխիթար (Գյոթե, 1992: 96):

Ներկայի ձևերը *բնութագրող իմաստով* կարող են հանդես գալ ինչպես ընդգրկուն այնպես էլ ոչ ընդգրկուն բնույթով: Այսինքն, ներկայի ձևերի այսպիսի իրացման դեպքում հնարավոր է խոսքի պահի և գործողության պահի համընկնում, թեև որոշ դեպքերում հնարավոր է նաև այնպիսի խոսքային իրավիճակներ, երբ տվյալ ձևերն ընդհանրապես չեն նշում համընթացություն խոսքի պահի հետ: Ի տարբերություն պարբերական ներկայի, այս ձևերն իրականացնում են անձ, առարկա բնութագրելու, նկարագրելու գործառույթ՝ նշելով որևէ գործողության, եղելության վերագրում: Ներկայի այսպիսի իրացման հիմնական միջոց հանդիսանում են նախ և առաջ մարդկային հույզեր, զգացմունքներ, վիճակ, մտորումներ, դատողություններ նկարագրող բայաձևերը: Ուստի ակնհայտ է, որ այս պարագայում կարևորվում է բայիմաստը, որն իրականացնում է գործողության բնույթի հաղորդման գործառույթ.

Wir sehen, dass er wohl nach dem Heiligen, wie nach dem Wüstlingen hin starke Antriebe in sich hat... (Hesse, 1985: 73-74).

Մենք տեսնում ենք, որ նա օժտված է ուժեղ ազդակներով՝ ինչպես սուրբ, այնպես էլ անառակ լինելու համար (Հեսսե, 2003: 55):

Կետային ներկայի ձևերի իրացման գործառույթը լեզվում գործողության պահի՝ խոսքի պահի հետ համընթացության փաստի արձանագրումն է: Այն նշում է խոսքի պահի հետ լիակատար կամ մասնակի համընկնում: Այն կարող է կատարվել խոսքի պահի հետ միաժամանակ, ընգրկել խոսքի պահը, անցյալի կամ ներկայի որոշակի ժամանակահատվածներ՝ նշելով խոսքի պահին համընթաց գործողության գաղափար: Գերմաներենում, ինչպես նաև հայերենում, ներկայի տվյալ իմաստի արտահայտման համար չկան հատուկ արտահայտման ձևեր (ինչպես անգլերենում Է): Կետային իմաստի հստակեցման համար, ըստ իրադրության, ցանկալի է նաև

բառային առկայացուցիչների ներմուծումը, որոնք և ընդգծում են խոսքի պահի հետ համընթացության հասկանիչը.

Und erst jetzt hört das auf eine Zufälligkeit zu sein (Hesse, 1985: 50).

Եվ միայն այժմ այն դադարում է պատահականություն լինելուց (Հեսսե, 2003: 42):

Գերմաներենում առկա է նաև բայերի մի խումբ, որոնք ըստ իրենց բառային նշանակության արտահայտում են կետային իմաստ. դրանք ակնթարթային կամ ոչ տևական բայերն են. *zerbrechen, schneiden, sterben, er(ver)blühen, gehen, kommen* և այլն: Երկրորդական իրացմամբ ներկայի ձևերը և՛ գերմաներենում, և՛ հայերենում դրսևորում են տևականության, ընդհանրական, նկարագրական, պարբերական, պատմողական, ապառնի իմաստներ:

Ներկայի ձևերն իրենց տևականության, ընդհանրական, նկարագրական, պարբերական իմաստով, խոսքում իրացվելով որպես փոփոխակներ, արձանագրում են խոսքի պահի և գործողության պահի համընկնում: Դեռ անցյալի մի կետում սկիզբ առած գործողությունը, որը ծավալվում է մինչև խոսքի պահը՝ ներառելով այն, կարող է ձգվել նաև խոսքի պահից հետո: Այս բոլոր նշված երկրորդական իմաստների իրացման դեպքում վավերական է համարվում խոսքի պահի և գործողության պահի համընկնում իմակը: Ե՛վ գերմաներենում, և՛ հայերենում ներկայի ձևերը այսպիսի երկրորդական դրսևորումներով մեկուսացած հանդես չեն գալիս, այլ՝ այդ գործառույթն իրականացվում է բազմաթիվ ժամանակային ցուցիչներով: Երկու լեզուներում էլ ներկայի ձևերի այսպիսի տարբերակված իրացման համար գոյություն չունեն հատուկ ձևեր, այլ՝ դրանք արտահայտվում են միևնույն բայաձով՝ հանդես գալով որպես ներկայի առաջնային իմաստների մասնակի դրսևորումներ:

Ոճական տեսակետից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում ներկայի ***պատմողական և ապառնի*** երկրորդական իրացումները: Ներկայի համար առաջնային համարվող «համընթացություն խոսքի պահին» իմակը սղվում է հետին պլան: Պատմողական գործառույթի իրացման դեպքում այն երկրորդական իմակը, որը ենթադրում է ներկայի սահմանների տարածում անցյալի և ապառնիի վրա, դառնում է հիմնական - առաջնային: Ներկայի ձևերն իրենց պատմողական իրացմամբ դիտվում են որպես ներկայի երկ-

րորդական իմաստ՝ լիովին ժխտելով ներկայի հիմնական, առաջնային իմաստը: Ե՛վ պատմողական, և՛ ապառնի իմաստները հիմնված են ժամանակային փոխանցման երևույթի վրա: Ներկայի ձևերն՝ իրենց պատմողական և ապառնի գործառույթներով, փոխանցվում են անցյալի և ապառնիի ոլորտ: Ներկայի՝ անցյալի ոլորտ փոխանցման պարագայում չեզոքացվում է ներկա - անցյալ կատարյալ, անցյալ անկատար (Präteritum) և ներկա - վաղակատար ներկա (Präsens - Perfekt) հակադրությունները, և ներկան հանդես է գալիս որպես անցյալ կատարյալի, անցյալ անկատարի, վաղակատար ներկայի հումանիշ: Այսպիսի փոխանցումը, սակայն, ենթադրում է որոշակի ոճական նպատակներ: Փոխանցման ոճական ազդեցությունը կայանում է նրանում, որ փոխադրված քերականության իր հիմնական իմաստը լրիվ չի կորցնում ներկայի՝ պատմողական կիրառության պարագայում, անցյալի գործողությունը ներկայացվում է ավելի տպավորիչ և արտահայտիչ կերպով՝ կորցնելով սակայն, այս դեպքում որևէ կերպիմաստի դրսևորման հնարավորությունը: Այն առավել հաճախ կիրառելի է քրոնիկոններում և այլ պատմողական բնույթի շարադրանքներում.

Im 1450 erfindet Guttenberg den Buchdruck.

1450թ. Գուտտենբերգը հայտնագործում է տպագիրը:

Ներկայի ձևերի ապառնի կիրառության դեպքում ոճական հնարավորություններն ավելի համեստ են, քան պատմողականի դեպքում: Այս պարագայում ևս գործում է ժամանակային փոխանցման երևույթը՝ չեզոքացնելով ներկա - ապառնի հակադրությունը: Ներկայի ձևերն ապառնի գործառույթով նշում են մոտ ապագայում կատարվելիք գործողության իմաստ: Այսպիսի դեպքերում ցանկալի է դառնում ժամանակային ցուցիչների առկայությունը, որոնք հստակեցնում են ներկայի ձևերի իմաստը՝ իրենց ապառնի իրացմամբ.

Morgen graut in einigen Stunden, da ist sie bereit (Berens-Totenohl, 1949: 222).

Լուսանում է մի քանի ժամից, ահա նա պատրաստ է:

Այսպիսով, ինչպես պարզ դարձավ ներկայի ձևերի իմաստաբանական և գործառական առանձնահատկությունների քննությունից, սույն ձևերի բազմազան կիրառության հնարավորություններն առավել պարզ դրսևորվում են խոսքային իրավիճակներում: Ուստի, միայն հանգամանալի քննության արդյունքների համադրման դեպ-

քում է հնարավոր լիովին բացահայտել տվյալ ձևերի իրական գնահատականը՝ ժամանակակերպային հարաբերությունների տեսակետից:

Եթե ներկայի նախորդ գործառույթների դեպքում խոսվում էր քերականական չեզոքացման մասին, ապա ներկայի ձևերի հրամայական գործածության դեպքում արդեն խոսվում է այս ձևերի՝ այլ եղանակային ոլորտ փոխանցման մասին: Սահմանական եղանակի ներկայի ձևերը փոխանցվելով հրամայականի ոլորտ՝ հանդես են գալիս հրամայական իմաստով: Ներկայի ձևերի այսպիսի իրացման հնարավորությունը հատկանշական է և՛ հայերենի, և՛ գերմաներենի համար.

Sie gehen jetzt sofort nach Hause!

Դուք հիմա անմիջապես գնու՛մ եք տուն:

Սահմանական ներկայի ձևերի հրամայական գործառույթի իրացման համար առաջնային են համարվում համատեքստը և ամբողջական նախադասությունը, որոնց միջոցով իրացվում է ներկայի հրամայական իմաստը և՛ հայերենում և՛ գերմաներենում: Հրամայական իմաստի ընդձման նպատակով կիրառելի է նաև որոշ ժամանակային հարաբերության նշող ցուցիչների, բառային և շարահյուսական միջոցների օգտագործումը, ինչպես՝ *gleich/անմիջապես, jetzt/այժմ, dann/հետո, vor dem Essen/ուտելուց առաջ* և այլն:

Այսպիսով, ներկան կարող է լինել իսկական ներկա կամ տևական, բնութագրական և կամ ժամանակից անկախ: «Այս բոլորը», ինչպես նշում է Հ.Աճառյանը, «ցույց են տալիս, որ ժամանակի գաղափարը խախտու է և նրանք հաճախ կարող են իրար տեղ գործածվել» /Աճառյան, 1959: 48/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, Հայկական ՄՍՀ գիտությունների Ակադեմիայի լեզվի ինստիտուտ, 4 հատոր, Ա գիրք, Երևան, 1959:
2. Գաբրիելյան Յու. Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, 2000:
3. Գյոթե Յ.Վ. Երիտասարդ Վերթերի տառապանքները, Երևան, 1992:
4. Հեսսե Հ. Տափաստանի գայլը, Երևան, «Նաիրի», 2003:

5. Հովհաննիսյան Ա. Հայերենի և անգլերենի ժամանակային ձևերի գոյադրական վերլուծություն, Երևան, Արտագերս, 1999:
6. Berens-Totenohl J. Die Stumme. Bonn: Verlag P. Vink, 1949.
7. Gabrieljan J. Deutsche Grammatik in Theorie und Praxis. Jerewan: Verlag der Universität Jerewan, 2008.
8. Glinz H. Die innere Form des Deutschen. Bern: Francke Verlag, 1962.
9. Goethe J.W. Die Leiden des jungen Werther. Zürich: Diagonales Verlag AG, 1986.
10. Hentschel E., Weydt H. Handbuch der deutschen Grammatik. Berlin: de Gruyter, 2003.
11. Hesse H. Der Steppenwolf. Frankfurt am Main: Suhrkamp Verlag, 1985.
12. Hovhannisyán A., Harutyunyan K. Linguistic Typology, Yerevan, 2009.
13. Krüger H. Wer stehend stirbt, lebt länger. Starnberg: R.S. Schulz, 1973.

Յ. ТЕР-АДАМЯН – *Временно-видовые реализации настоящего времени в немецком и армянском языках.* – Вопросом исследования данной статьи являются семантико-функциональные особенности временно-видовых форм настоящего времени в немецком и армянском языках. И в немецком, и в армянском языках эти формы реализуются разными лексико-грамматическими средствами, которые особенно выражены в контексте. Как было показано в параллельном анализе, в обоих языках были найдены тождественные временно-видовые формы, с некоторыми исключениями, в зависимости от языковых особенностей данных языков.

SH. TER-ADAMYAN – *Tense-Aspect Realizations of Present Forms in the Armenian and German Languages.* – The focus of the present paper is the semantic and functional peculiarities of tense-aspect forms of present time in the German and Armenian languages. Both in German and Armenian these tense-aspect forms are expressed in different ways, which is well observed especially in the context. The parallel analysis has revealed the same tense-aspect realizations in both languages, with certain exceptions depending on the language peculiarities of these two languages.